ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/115

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 19.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 19.11.2018թ. ներկայացրել է բողոք, որը կազմված էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Բողոքներ քննող անձը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել էր «ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 19.11.2018թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Բողոքներ քննող անձին ներկայացնելու համար:

Ընկերությունը 23.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

««Արմես Գրուպ» ՍՊԸ-ն 30.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ոստիկանության կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով

հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել է հաղթող 1-ին չափաբաժնի մասով: Սակայն, երբ պատվիրատուն, որի հասցեն է Նալբանդյան 130, հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և պարզվել է, որ Ընկերությունը 30.10.2018թ. դրությամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց 19,000 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա կայացվել է թիվ 3 արձանագրությունը և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն, ճանաչվել է որպես չընտրված մասնակից, ուստի առաջին տեղը զբաղեցնող են ճանաչում հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,3-րդ,4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

2018թ հունիսի 11-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Կոմիտեի խնդիրներն են՝ պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Համաձայն Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև ԱԱՀ)

բ.ակցիզային հարկը,

գ.շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է.շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը,

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են.

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

Ա. պետական տուրքեր,

Բ. բնօգտագործման վճարը,

Գ. սոցիալական վճարը,

Դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

Ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

Զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

Ա. տեղական տորքը,

Բ. տեղական վճարը:

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած՝ վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված հրամանի հավելվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ

հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Մասնակցության հայտը ուղարկելուց առաջ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը՝ Արմենուհի Եսայանը, առաջնորդվել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորություններ բաժնի անձնական հաշվի քաղվածքով, որտեղ արտացոլված է եղել, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն ունի 1,402,097 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդում և 272 դրամ առկա գումար միասնական հաշվում:

Ուստի «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը՝ Արմենուհի Եսայանը, պահանջում է, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժնի մասով պատվիրատուին պարտավորեցնի դադարեցնել հայտը մերժելու մասին որոշումը և ընկերությանը ճանաչի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Արմենուհի Եսայանը:

2. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել ՀՀ ոստիկանությանը Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արա Կոթողյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.09.2018թ. նիստի թիվ 2, 12.11.2018թ. նիստի թիվ 3 և 20.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները.

ՀՀ ոստիկանությանը կարիքների համար մաքրող նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին 31.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության 2-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովի 07.09.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 4-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկը կազմել է 348,600 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ 528,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

- 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին:

- 9-րդ կետով Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային փոստի միջոցով հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Այնուհետև, 12.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովն արձանագրել է, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտարարվում է չընտրված մասնակից, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /31.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 19,000 ՀՀ դրամի չափով:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության տնօրենը պնդեց Բողոքում ներկայացված դիրքորոշումն ամբողջությամբ՝ ընդգծելով, որ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով աճուրդի շրջանակներում ի հայտ եկած՝ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունը առաջացած է եղել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով:

Ընկերության ներկայացուցիչը վկայակոչեց նաև Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները, որոնք սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, ընդ որում, նույն հոդվածների համաձայն՝ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ: Ըստ այդմ, բողոքաբերը կարծիք հայտնեց, որ դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմնավորմամբ Հանձնաժողովի կողմից հայտը չպետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 30.11.2018թ. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա

գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 30.10.2018թ. դրությամբ ունեցել է 19,000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություն, ինչպես նաև 1,402,097 ՀՀ դրամի չափով ավելացված արժեքի հարկի գծով դեբետային մնացորդ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց նաև հայտը ներկայացվելու օրվա՝ 31.10.2018թ. դրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ոստիկանությանը կարիքների համար մաքրող նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

• 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 31.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 19,000 ՀՀ դրամի չափով:

- «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարբտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 31.10.2018թ. դրությամբ Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 22.11.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 19,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ Ընկերությունը

նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, և ունեցել է դեբետային մնացորդ՝ 1,402,097 ՀՀ դրամի չափով՝ ավելացված արժեքի հարկի մասով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 19.11.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԳ/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ